<u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>

<u>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը</u>

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների
եվրոպական ցանցի նախագահ
Քերոլայն Ֆենելի բաց նամակը
ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Արարատ Միրզոյան,

2021 թվականի մարտի 11-ին ՀՀ կառավարության ներկայացրած՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առաջարկվող փոփոխության կապակցությամբ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (European Network of National Human Rights Institutions - ENNHRI) սույն նամակով Ձեր ուշադրությունը հրավիրում է միջազգային չափանիշներին, որոնք վերաբերում են Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համար պատշաճ ֆինանսավորում ապահովելու անհրաժեշտությանը, ինչը կարող է ազդել այդ հաստատությունների անկախության և արդյունավետության վրա:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը և միջազգային այլ կազմակերպություններ տեղյակ են, որ առաջարկվող օրինագիծն առաջարկում է ուժը կորցրած ճանաչել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարի Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Առկա գործընթացը և առաջարկվող փոփոխությունը մտահոգություններ են առաջացնում միջազգային չափանիշների նկատմամբ հարգանքի տեսանկյունից՝ կապված նրա հետ, որ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների և հասարակության հետ անհրաժեշտ են նախնական ու բովանդակալի խորհրդակցություններ՝ օբյեկտիվ չափանիշների հիման վրա քննարկման առարկա դարձնելով առաջարկվող փոփոխության ազդեցությունը մարդու իրավունքների ազգային հաստատության պատշաճ ֆինանսավորման վրա, որը կարող է ազդել տվյալ հաստատության անկախության և (կամ) արդյունավետության վրա:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 48/134 բանաձևով ընդունված Փարիզյան սկզբունքները սահմանում են միջազգային նվազագույն չափանիշներ, որոնց պետք է համապատասխանեն մարդու իրավունքների ազգային հաստատություններն անկախ և արդյունավետ ճանաչվելու նպատակով: ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքների նշանակությունը և կիրառելիության շրջանակը հստակեցնելու նպատակով Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքն ընդունել է Ընդհանուր դիտարկումներ, որոնք արտացոլում են Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքի Հավատարմագրման ենթահանձնաժողովի կողմից ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքների կիրառումը մարդու իրավունքների ազգային հաստատությունների միջազգային հավատարմագրման գործընթացում՝ համաձայն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գրասենյակի կողմից սահմանված ընթացակարգի:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը միջազգային «A» կարգավիճակ ունեցող մարդու իրավունքների ազգային հաստատություն է, որը վերջին անգամ <u>հավատարմագրվել (ենթարկվել է ակրեդիտացիայի)</u> է 2019 թվականի մարտ ամսին՝ որպես ամբողջությամբ ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներին համապատասխանող: Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքի Հավատարմագրման (ակրեդիտացիայի) ենթահանձնաժողովը Մարդու իրավունքների պաշտպանին առաջարկել է «հետևողականորեն շարունակել միջոցներ ձեռնարկել իր լիազորություններն ամբողջ ծավալով արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսավորում ստանալու նպատակով», այդ թվում՝ իր այնպիսի լրացուցիչ

լիազորությունների իրականացման կապակցությամբ, ինչպիսին Կանխարգելման ազգային մեխանիզմն է (National Preventive Mechanism – NPM):

Եվրոպայի խորհրդի Վենետիկյան սկզբունքները ևս պարունակում են Օմբուդսմանի հաստատություններին բավարար և անկախ բյուջետային միջոցներ տրամադրելու վերաբերյալ ամուր երաշխիքներ:

Նշված միջազգային չափանիշներից հետևում է, որ՝

• մարդու իրավունքների ազգային հաստատությունները պետք է ապահովվեն պատշաճ ֆինանսավորմամբ՝ նրանց անկախությունը, ինչպես նաև գործունեության առաջնահերթություններն ազատորեն որոշելու հնարավորությունը երաշխավորելու նպատակով,

• պատշաճ ֆինանսավորման միջոցով պետք է ողջամտորեն երաշխավորվի մարդու իրավունքների ազգային հաստատության գործունեության, տվյալ հաստատության կողմից իր լիազորությունների իրականացման աստիճանական կատարելագործումը: Այն պարագայում, երբ պետության կողմից մարդու իրավունքների ազգային հաստատությանը վերապահված են լրացուցիչ պարտականություններ, դրանց իրականացման նպատակով պետք է տրամադրվեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ,

• մարդու իրավունքների ազգային հաստատությունների ֆինանսավորման տրամադրումը պետք է հիմնված լինի օբյեկտիվ չափանիշների վրա և չպետք է խոչընդոտի տվյալ հաստատության կողմից իր աշխատանքն արդյունավետ և անկախ իրականացնելուն: Իշխանության համապատասխան մարմինները չպետք է մարդու իրավունքների ազգային հաստատությունների ֆինանսավորումը կրճատումը չպետք է օգտագործել հաստատության աշխատանքը խաթարելու համար,

• թեև պատշաճ ֆինանսավորումը մասամբ որոշվում է պետության ընդհանուր ֆինանսական վիճակի հաշվառմամբ, նույնիսկ ֆինանսական խիստ անբավարար պայմաններում, պետությունները պարտավոր են պաշտպանել հասարակության առավել խոցելի այն անդամներին, որոնք հաճախ են դառնում մարդու իրավունքների խախտումների զոհ: Այդ պատճառով մարդու իրավունքների ազգային հաստատությունները ֆինանսական ողջ տարվա ընթացքում պետք է կարողանան պատշաճ ֆինանսական միջոցներով շարունակել

մարդու իրավունքների բնագավառում իրենց լայն մանդատի իրականացումը: Իշխանության համապատասխան մարմինները պարտավոր են խորհրդակցել մարդու իրավունքների ազգային հաստատության հետ՝ հասկանալու համար՝ ի՞նչ է նշանակում պատշաճ ֆինանսավորում, և որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա,

• օրենսդրական այն փոփոխությունները, որոնք պարունակում են մարդու իրավունքների ազգային հաստատության գործունեությունը և անկախությունը վտանգելու ռիսկեր, պետք է մանրամասն քննարկվեն ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից և նախապես պետք է տեղի ունենա արդյունավետ խորհրդակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելով մարդու իրավունքների ազգային հաստատության հիմնարար (strong) մասնակցությունն այդ գործընթացին:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսավորման համար նախատեսված երաշխիքն առ այն, որ պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող նախորդ տարվա պետական բյուջեով հատկացման չափից պակաս լինել, Եվրոպայում ճանաչված է լավագույն փորձ, և որ դա համահունչ է հաստատության լրացուցիչ գործառույթների և իրականացվող մեծածավալ աշխատանքին:

Նշված երաշխիքը վերացնելուն ուղղված ՀՀ կառավարության առաջարկը պետք է դիտարկել ձեռնարկված այն արարքների *(նկատի են ունեցել Կառավարության քայլերը - խմբ.)* համատեքստում, որոնք բացասական են ազդել Մարդու իրավունքների պաշտպանի առկա ռեսուրսների և հեղինակության վրա՝ այնպիսիք, ինչպիսիք են հաստատության տեխնիկական կարողությունների *(նկատի են ունեցել ավտոմեքենաները – խմբ.)* նվազեցումը: Պետական մարմինները պետք է ձեռնպահ մնան այնպիսի ցանկացած գործողություն ձեռնարկելուց, որն ուղղված է կամ հանգեցնում է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների արդյունավետ գործունեությունն անհարկի խոչընդոտելուն և պետք է արդյունավետ պաշտպանեն նրանց ցանկացած այդպիսի սպառնալիքներից: Նշվածն այլ միջազգային փաստաթղթերի թվում ճանաչված է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2018)11 հանձնարարականով:

Ոչ բավարար բյուջեն կարող է Մարդու իրավունքների ազգային հաստատությունը դարձնել անարդյունավետ կամ սահմանափակել այդ հաստատության լիարժեք արդյունավետ

գործունեությունը: Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքի Հավատարմագրման (ակրեդիտացիայի) ենթահանձնաժողովը կարող է նախաձեռնել հատուկ ստուգում, որի արդյունքում կարող է պարզվել, որ Մարդու իրավունքների ազգային հաստատության պայմաններն այնպես են փոփոխվել, որ բացասական ազդեցություն ունեն ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներին համապատասխանության վրա, այդ թվում՝ Մարդու իրավունքների ազգային հաստատության գործունեությունը կարգավորող օրենքում նշանակալի փոփոխություններ կատարելու միջոցով:

Հիմնարար նշանակություն ունի այն, որ քննարկվող փոփոխությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեն բովանդակային խորհրդակցություններ բոլոր շահագրգիռ կողմերի, հատկապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի հետ, և դա չի տանում ավելի վատ պայմանների տվյալ հաստատության գործունեությունը միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխան իրականացնելու համար:

Վերը նշվածի համատեքստում Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը Ձեզ կոչ է անում առաջարկվող փոփոխությունը դիտարկել վերաբերելի միջազգային չափանիշների ամբողջական դիտարկման համատեքստում՝ երաշխավորելու համար այն, որ Մարդու իրավունքների պաշտպանը կարողանա շարունակել իր արդյունավետ և անկախ աշխատանքը: Մեր համոզմամբ՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված լավագույն փորձը պետք է պահպանվի:

Մենք պատրաստակամ ենք լրացուցիչ պարզաբանել վերաբերելի չափանիշները և համագործակցել քննարկվող հարցի կապակցությամբ: